

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝**«Սեյսմանախազիծ» ՍՊԸ տնօրեն՝****_____ Ռ. Հայրապետյան****“ _____ ” _____ 2015թ.****ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ****ՀՀ Լոռու մարզի Մարց գյուղի դպրոցի տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատման վերաբերյալ**

Սույն եզրակացությունը տրվում է համաձայն ԱՌՆԱՊ հիմնադրամի և «Սեյսմանախազիծ» ՍՊԸ միջև 01.12.2015թ. կնքված թիվ ԱՍ-01/15 պայմանագրի: Եզրակացություն տալու նպատակով «Սեյսմանախազիծ» ՍՊԸ կողմից (Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության Պետ. լիցենզիա N13374 տրված 08.09.2009թ.) կատարվել է ՀՀ Լոռու մարզի Մարց համայնքի դպրոցի (այսուհետ շենք) ակնադիտական հետազննություն, չափագրման և լուսանկարման աշխատանքներ

ՀՀ Լոռու մարզի Մարց համայնքի դպրոցի շենքը կառուցվել է 1967 թվականին: Դպրոցի շենքի նախագծային փաստաթղթերի վերլուծություն չի իրականացվել դրանց բացակայության պատճառով: Հարկ է նշել, որ ՀՀ-ում առկա կառուցված դպրոցները հիմնականում կառուցվել են տիպարային նախագծերով:

2013 թվականին Մարց համայնքի դպրոցի շենքերը ուժեղացվել են և հիմնանորոգվել (տես նկ 1):

Ներկա վիճակում դպրոցը կազմված է մեկ նորակառույց եռահարկ մասնաշենքից, մեկ երկհարկ մասնաշենքից և մեկ կառույց հանդիսացող միահարկ մարզադահլիճի մասնաշենքից:

Հարկ է նշել, որ երկհարկանի հիմնական ուսումնական մասնաշենքը և մարզադահլիճը ուժեղացվել են երկկողմանի միաձույլ ե/բ շապիկով:

Դպրոցի նախագծային հզորությունը հաշվարկված է 120 աշակերտի համար: Ըստ դպրոցի տնօրենի տեղեկատվության՝ 2015թ. դպրոցում սովորում է 55 աշակերտ:



Նկ. 1 ՀՀ Լոռու մարզի Մարց համայնքի դպրոցի տեսքերը դրսից և ներսից

Հիմնվելով հետազննության արդյունքներին եզրակացնում ենք.

1. Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի կողմից 08.12.2009թ. թիվ 282-Ն հրամանով հաստատված «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազոտման մեթոդական ցուցումների», ՀՀ Լոռու մարզի Մարց համայնքի դպրոցի շենքի տեխնիկական վիճակը գնահատվում է լավ՝ առաջին աստիճան, այն է՝ կոնստրուկտիվ տարրերը պիտանի են շահագործման համար:

2. Համաձայն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից առ 23.10.2014թ. թիվ 957-Ա հրամանով հաստատված «Շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիության մակարդակի (աստիճանի) գնահատման մեթոդական ցուցումների», ՀՀ Լոռու մարզի Մարց համայնքի դպրոցի շենքի սեյսմիկ խոցելիության մակարդակը (շենքի վարքը երկրաշարժի դեպքում) գնահատվում է ցածր, այն է՝ օբյեկտի տարածքում 9 բալ և ավելի բարձր ըստ MSK-64 սանդղակի (գետնի սպասվելիք առավելագույն արագացումը $A_{max}=0.4g$) հնարավոր երկրաշարժի ժամանակ շենքի կոնստրուկցիաներում կարող են առաջանալ չափավոր վնասվածքներ՝ վնասվածքի աստիճանը 2-րդ համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 նորմերի 24 աղյուսակի:

Կատարող՝
գլխավոր ճարտարագետ,
տեխնիկական գիտությունների թեկնածու,
ԳՄԱ ԷԿԱ թղթակից անդամ՝

Զ. Խլղաթյան